

ՄԱՅՐԻԿ, ԿԱՐՕՏԵՆ ՈՒՆԻՄ ԱԼ

Նուէր՝ Թափառական պանդուխտներուն

Մայրիկ, կարօտն ունիմ ալ  
Եղբայրներու համբոյրին.  
Վիշտէս՝ հատաւ, հալեցաւ  
Սէրն իմ պանդուխտ հոգիին:

Շիրմիդ վըրան երբ հեւայ  
Վըսեմ աղօթքը՝ խաչիս  
Գիտցիր՝ (աշխարհն է ունայն)  
Մայրիկ, պիտի մեռնիմ ես...

Ե՞րբ լոյսը, Մայր, աչքերուս  
Նայուածքիդ մէջ պիտ ցանեմ.  
Դեռ մինչեւ ե՞րբ, Մայր որբի  
Արցունքներս ալ քեզ տանջեն...

Բայց, իմ վիշտն է ամենունն  
Եւ ամենունն ալ իմն է.  
Անոր ծամար Մայր հոգւոյս  
«Տուայտակներ»ն՝ արդ օրհնէ...

Վենետիկ, 1 Յունուար 1930

Ֆերուօ

Վ Ե Ն Ե Տ Ի Կ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻՆ  
Ի յիշատակ Վենետիկի մէջ հիւսուած  
մեր խանդակաթ բարեկամութեան:

Ա.

Քեզմէ հեռու և տըրտում եթէ ապրիմ շարունակ  
Դուն կ'աղօթեա հոգւոյս մէջ, իմ լուսապանծ Վենետիկ.  
Ու մտքիս մէջ կը խոկաս, կը նըւագեա կուրծքիս տակ,  
Ծոցն աչքերուս կը շողաս ու կը հըսկեա երջանիկ:

Ի զո՛ւր տեսայ ոստաններ անծայրածիր ու մըթին,  
Ծուխի, շարժման, աղմուկի հեշտութեան մէջ ընկըմած.  
Կոչնակներուդ զօղանջին և ջուրերուդ մըրմունջին  
Անըրջային թովչութիւնն ես ո՛չ մէկ տեղ չեմ գըտած:

Յայգալոյսիդ և ապա վերջալոյսիդ մեղեդին  
Երանգագօծ, մեղրածոր, տաւիղներով բազմադի,  
Հորիզոնիդ ծոցէն լոկ կը ծընանի ցընծագին,  
Կը ծածանի հեծեծուն և ծովուդ տակ կը սուզուի:

Կոնտուավար մ'եմ այս գիշեր,  
Կերգեմ երգեր Դասսոյի,  
Ջեփիւռ, ալիք ու մըրմունջներ  
Կան աստղերուն տակ ոսկի:

Բ.

Սուրբ Մարկոսի Տաճարն է խորհրդապաշտ իմ հոգին,  
Հոն մոմերու լոյսին տակ կ'արիւնի վէ՛րքն Յիսուսի,  
Եւ սիւներու ըստուերներ՝ գերդ բազուկներ՝ կ'երկարին  
Խաչափայտին, պարզութեամբ անհուն սիրոյ և յոյսի:

Խորունկին մէջ կը լըսուի երգահոնի ձայն մ'անոյշ,  
Բուրումնաւէտ խունկի պէս տարածուելով մեղմօրէն,  
Խորանին շուրջ կ'աղօթեն քահանաներ և՛ ըզգոյշ՝  
Գըմբէթներուն տակ՝ անթիւ հըրեշտակներ կը թեւեն:

Երեկոյեան երբ նընջեն աղանիններն համօրէն,  
Եւ մութին ծոցն երբ սուզուին զանգակատանց կատարներ,  
Դահլըճին մէջ՝ զըլխահակ՝ բազմութիւններ կ'ունկընդրեն  
Պէթհովէնն ու Ռոսսինին, Սերաստիանոսն ու Վակներ:

Պալատներուն տակ այս գիշեր  
Կը նըւագեմ ու կ'երգեմ.  
Հազար տեսակ անոյշ յուշեր  
Չուրերուն մէջ կ'որոնեմ:

Գ.

Եւ Տոթերու Պալատն է միտքս, աւասիկ, գերակայ,  
Հոն կը խոկան քովէ քով վեհապետներ խորիմաց.  
Դինդորեղոն կը յորդի, և Դիցիանոն կը խայտայ  
Գոյնի, լոյսի, ըստուերի պըշրանքներով վերացած:

Հառաչանքի կամուրջով կը միանան իրարու  
Ուրախութեան և լացի աղաղակներ տենդագին,  
Ապարանքի պերճութիւն և մըթութիւն բանտերու  
Հոն իրարու կը բախին և իրարմով կը զինուին:

Սարսուռ և վախ ներշնչող այս բանտերէն խուսած է  
Շըղթայագերծ, տիրակալ, փազանովան վայրենի.  
Եւ զընդանի քարերուն վըրայ զըլո՛ւն հանգչած է  
Մըտածումով բեռնաւոր փոթորկավար Պայրընի:

Հառաչանքի կամուրջին քով  
Լուսնակն արծաթ՝ կը շողայ,  
Եւ կիթառիս բիւր երգերով  
Քո՛ւնն աչքերէս կ'ուշանայ:

Դ.

Սուրբ Ղազարու կրղզեակն է սիրտս ուխտավայր Հայութեան,  
Այնտեղ նոճեաց կատարներ և ձիթենեաց տերեւներ  
Հովին անոյշ համբոյրով կը տատանին յաւիտեան,  
Եւ ալիքներն փերուէն կը մըրմընջեն նըւագներ:

Հոն կը հանգչի Մըխիթար, իր հանճարին ծանրութեամբ  
Լուսասփիւռ և գեղակերտ մարմարներու տակ կը քած.  
Եւ ծերունի Ալիշան՝ երակներուս ապըստամբ  
Բարութիւնն իր կը հեղու ծընրադիր և երկիւղած:

Այրարատի բարձունքէն շողն արեւուն առաջին  
Լիտոն հազիւ փայփայած կրղզեակիս վրայ կը հանգչի.  
« Սալուդէ » ի տաճարին վերջալոյսի շողն յետին  
Մենաստանիս նոճեզարդ ճամբաներէն կը փախչի:

Ես կը սիրեմ ձեզ, Հայաստան  
Եւ Իտալիա, կաթողին.  
Ձեր թեկերով քընարական  
Դուք հիւսեցիք իմ հոգին:

Ե.

Եւ աչքերս են փարոսներն Աղբիական դըշխոյին,  
Որոնք ծովուն յանդիման, կրղզեակներուն առընթեր,  
Աստղերու պէս, մութին մէջ, յաւերժօրէն կը փայլին,  
Եւ սուզուելով ջուրին տակ կը յօրինեն նոր պատկեր:

Ալիքներուն կուրծք տալով կը մընան միշտ անըկուն,  
Խաւարին լոյս սըփոռելով՝ կը փողփողին տիրաբար.  
Իրենց վերեւ երկինքն է կամարակապ և անհուն,  
Եւ շուրջը ծո՞ղն արտասուող և ծիծաղող անդազար:

Վենետիկի մէջ կ'ապրիմ՝ երբ շնչեմ իր երկնին տակ,  
Բայց վենետիկն յիս կ'ապրի՝ ինչ երկնի տակ որ շընչեմ.  
Ես երբ մեռնիմ պանդուխտ, ան՝ երբ յիս չապրի՝ շարունակ  
Աճիւններով թող գոնէ իր ծոցին մէջ ես նընջեմ:

Ձուրերուն մէջ և աչքերուս՝  
Կ'իշնան երկնից բիւր աստղեր.  
Մըրմունջ, սարսուռ, հըծծիւն և յոյզ  
Ձիս կ'օրօրեն այս գիշեր:

Վենետիկ, 1933 ՀՐԱՁ ՔՍՁՍՐԵՆՑ

Ա. Ջ. Ո. Լ. Ո. Յ.



Վե՞՞՞՞՞ տարի վերջ անա դարձեալ բըլուրներո՞ւղ վըրայ կանգնած,  
Բայց չեմ եկած գոնել անցեալն և յուշերու երամն յակինթ,  
Եւ ոչ ալ իմ հոգիս այսօր կ'ըղձայ շըջիլ հովտէ հովիտ,  
Տըտմութեան պէս ծանր են խոհերս աշնան լոյսին մէջ այս յոգնած:

Ես կը զիտեմ միայն հիւղերն, այգեստաններն ու նոճիներ,  
Ապառաժին կեցուածքն հըզօր և կամ հանդարտ վազըն առուակին  
Որ կը բըխի՝ սա քարերէն, և տատանումն անդորրաբեր՝  
Բարտիներուն և թուփերուն երբ կ'անցնի հո՞ղն իրիկունին:

Միշտ նո՞յն ես դուն ինչպէս նոյնն է անվերջ հառա՛չն անպարտ ծովուն,  
Ոչինչ փոխուած, միայն ես եմ կորսնցուցած ժըպիտն այտիս,  
Միայն ես եմ վանած սրտէս ուրախութիւնն իմ տարիքիս,  
Ու այցելած շատ շիրիմներ և ապրած ցաւն անբախտներուն:

Ես եկած եմ հանգչիլ քեզ մօտ, զի բընութիւնն իմ մըտածման  
Եղբայրն է մեծ, ինձ հետ գիտեն արահետներն ու պուրակներ  
Խօսիլ լեզուն խաղաղութեան, ես պիտ' խորհիմ և լըռեւեան՝  
Դիտեմ ինչ որ մենութեան մէջ երեկոյեան կ'առնեն թեւեր:

Իւրաքանչիւր ծաղկի վրայ պիտ' հանգչի սիրտն իմ արփաւէտ,  
Եւ բոլորուի վայրկեաններովն իմ պատանի տարիներուս,  
Ես պիտ' ուզեմ զըզուել ինչ որ իմ հոգւոյս էր շող և սնդուս  
Ինչ որ աւա՛ղ այժմ ես չունիմ զի տըտում է կեանքն իմ յաւէտ:

Ահա աղբիւրն որուն մըմունջն արծաթ երի՛զ մ'է լոյսին մէջ,  
Որ կը թափի թաւուտներէն աւազանին մէջ անմեկին.  
Ահա քարէ նստարանն ալ և անա կո՛ճղն ալ լայն ու գէջ,  
Որոնց մօտ ես ճանչցած եմ զիս և փորձած ո՞յժն իմ քընարին: